ՀԵՆՐԻ ԿԱՎԵՆԴԻՇ



(1731-1810)

Անգլիական ազնվական ընտանիքից սերված այս անձնավորությունը աչքի էր ընկնում մարդկային զարմանալի որակներով: Նրան խորթ էին կենցաղային ամենօրյա հարաբերությունները, փառքն ու գնահատանքը:

Կավենդիշը գիտությամբ զբաղվում էր հաճույքի համար, չէր սի րում հրատարակել իր աշխատությունները, ինչի հետևանքով նրա շատ հայտնագործությունների անհայտ մնացին մարդկությանը, մինչև նրա մահից 50 տարի անց անգլիացի ֆիզիկոս Ջեյմս Մաքսվելը հրատարակեց դրանց մի մասը: Դա է պատճառը, որ Կավենդիշի հայտնաբերած մի շարք օրենքներ ներկայումս կոչվում են այլոց անունով:

Դեռևս 1771 թվականին Կավենդիշը փորձով հանգել է այն եզրակացության, որ կետային լիցքերի փոխազդեցության ուժերն, իրոք, փոփոխվում են $1/r^2$ օրենքով: Եվ թեև Կավենդիշը կետային լիցքերի փոխազդեցության օրենքը հայտնագործել է Կուլոնից 14 տարի առաջ, այդ օրենքը ներկայումս անվանում են Կուլոնի անունով: